

ւարտեցաւ Թագմանուիւ Հրաշալեացն Աստուծոյ առ
 Հոգիս քաւարանին, ի Թուին Քրիստոսի 1723, յամ-
 սեանն Մայիսի, աշխատուք Յօնանու Եպիսկոպոսի, ի
 փառս Աստուծոյ, ի պատիւ սրբոյ կուսին, յօժանդա-
 կումն Հոգւոց հաւատացելոց, եւ ի շահաւէտուիւնս հո-
 գեւորականացս աղգին մերում, եղիցի եւ եղիցի ամէն:»

Մինչեւ 1727 իրեն կեանքին հետեւելէն
 ետեւ՝ պէտք է որ իր մահը ղնեմ 1728 ի
 Փայաս կիլիկիոյ: Ղասն ղի Թէեւ շ. Ղ. Ալիշան
 (Հայ-Վենետ., էջ 343) կ'աւանդէ Թէ Յովնան
 1731—35ին տակաւին Վենետիկ կը գտնուի,
 սակայն Դաւիթեան Ս. (Davidian S., Bio-
 graphia di S. B. Abramo Pietro I. . . Cairo,
 1861, էջ 68) կը գրէ Թէ 1728ին ի Փայաս
 վախճանած է: Թէ ի Փայաս 1728ին կտակ
 գրած է, կը հաստատէ իր վաւերական կտակն
 (Դիւ. Անտ.), որուն Թուականն է «Թվին Քրիս-
 տոսի 1728 Օգոստ. 17, գրեցաւ ի յաւերակ
 քաղաքն ի Փայաս», իսկ ստորագրութիւնն՝
 «Ես Թօխաթեցի Յունան եպս. Սերաստիոյ մայ-
 րաքաղաքին»: Ի մէջ այլոց կ'ըսէ. «. . . վերջի
 կամ իմ ծանուցանեմ ամենից տեսողաց զայս
 կտակագիր. եւ ղի ժառանգ եւ գօմիսար յետ
 մահուան իմոյ կացուցանեմ ի յարեւելս զգե-
 րապայծառ զաբրահամ արհի եպիսկոպոսն մայ-
 րաքաղաքին Բերիոյ, ի վերայ աղգին Հայոց, որ
 յայժմ հալածեալ կայ վասն սրբոյ հաւատոյ ի
 լեռն Վերանան ի նորաչէն վանքն սուրբ Փրկիչ:
 Արդ զոր ինչ ունիմ Թողում յիշատակ նորաչէն
 վանուց վերոյ յիշեցելոյ: Վամիմ ղի յառա-